ՆՈՐ-ԴԱՐ

№ 87 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 30 Մայիսի 1885 Հինգշաբթի 30 Մայիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 87

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. հատով 5 կոպէկ: Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»:

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ընկլամների համար՝ կրկնապատիկ:

МОСКВА 4 ИЮНЯ 1885

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում յունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են—6 ր. 50կ:

Հասցէների փոփոխութեան համար վճարում են եօթը հատ եօթը կոպէկանոց մարկա:

Թերթը ամարանոցում ստացող բաժանորդները վճարում են 80 կոպ.

Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրատանը, քաղաքի կենտրոնում, պոստատան ետևը. Տրօիցկի փողոցում Սամբրօ եկեղեցու հանդէպ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն.— Լուրեր: Վագերի մնասատու. միջադէպերը:
Թղթակցութիւններ: — Երեան: Արդուին:
Քաղաքական.— Բուլգարական իշխանութիւնը և Արևելեան Ռումելիան 1878—1885 Թ: Անգլիա: Գերմանիա: Հարիշտան: Ֆրանսիա:
Խառն լուրեր:
Հեռագիրներ:
Յայտարարութիւններ:
Բանասիրական. — Մատենախօսական ակնարկ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Յօգուտ Զէյթունցի հրկիզելոց ստացանք 15 րուբլի խոհարար Ղազարոս Թաղիևեզեանից, որ նա հաւաքել է իւր ընկեր խոհարարներից: Նուիրատուներն են՝ Ղազարոս Թաղիևեզեանց 1 ր. 50 կ., Մկրտիչ Մանուկեանց 1 ր. 50 կ., Մ. Ս. Բ... 1 ր., Յարութիւն Մկրտչեան 1 ր., Բէգլար Յովհաննիսեան 1 ր., Մարութ Գասպարեանց 1 ր., Յովհաննէս Ջուհանեանց 1 ր., Աբեսալոմ Տէր Թումանեանց 1 ր., Յովհաննէս Մարգարեանց 1 ր., Աբրահամ Մելիք-Մինասեանց 50 կ., Դաւիթ Սարգսեանց 50 կ., Գրիգոր Ղազարեանց 50 կ., Յ. Մ. Մա... 50 կ., Յարութիւն Մկրտչեանց 50 կ., Շամիր Ոսկանեանց 50 կ., Մարտիրոս Աղատեանց 50 կ., Առաքել Գրիգորեանց 50 կ., Թադէոս Սիմէոնեանց 50 կ., Յովհաննէս Զոլախեանց 50 կ.—Ընդամենը 15 ր.

—

Ամսիս 27-ին Թիֆլիսում՝ Կասոլիչեսկայա փողոցի վերայ գտնուող Զուբալովի տանը, որի մէջ գտնվում էր «Լոյս» ընկերութեան յախճապակեայ ամանների պահեստը, հրդեհ պատահեց և ամբողջ տունը իւր միջի իրեղէններով բոլորովին ոչնչացաւ: Տունը ապահովված է «Ռուսական ընկերութեան» մօտ 12,000 րուբլիով, իսկ ապրանքը «Նադեժդա ընկ». մօտ 50,000 րուբլիով:

—

ԹԵԼԱՒԻՑ.—Հինգշաբթի մայիսի 23-ին, երեկոյեան մօտաւորապէս ժամը 6-ին սպանութեան մի շատ արտասովոր փորձ պատահեց Թէլաւում: Տեղիս գաւառապետ՝ իշխան Նիկոլայ Չէլօկաևիը լինում է իւր առանձնասենեակում՝ իւր քարտուղար պ. Տերուկովի հետ և նայում են պոստից նոր ստացած լրագիրների վերայ: Այդ միջոցին գալիս է գաւառապետի տուն սև և հասարակ հագուստով մի կին և յայտնում է սպասաւորին, թէ ցանկանում է իշխանին տեսնել: Սպասաւորը յայտնում է իւր տիրոջը, և պատասխան է ստանում, որ „այժմ ժամանակ չունիմ, թող մի ուրիշ անգամ շնորհ բերի»: Կինը չի հեռանում, այլ պնդում է, որ մի շատ անհրաժեշտ գործի համար հարկադրուած է անպատճառ այսօր տեսնել: Ծառան գընում է այս մասին յայտնելու իւր տիրոջը, այն ինչ կինը չըսպասելով պատասխանին, մտնում է նրա յետևից ուղղակի իշխանի առանձնասենեակը, ուր նա թեք ընկած է լինում. գլուխը բարձրացնում է թէ չէ, որ տեսնի թէ կինը ով է և ինչ է կամենում, մի ակընթարթում վերջինս ըէվօլվէր է արձակում նրա վրայ, փորձում է և երկրորդ անգամ, բայց իշխանի աղաղակների վրայ ծառաները ներս են թափվում, դուրս են թերում կնոջը և ըսկսում են գանահարել: Գաւառապետը չվիրաւորուած՝ խելոյն դուրս է գալիս, ծառաները ըէվօլվէրը խլելով հեռանում են, իսկ կինը ասում է. «շնորհակալութիւն ծեծի համար»: Գաւառապետը պատասխանում է՝ «շնորհակալ եմ ինձ վիրաւորելու համար»: Այստեղ արդէն յայտնվում է որ այդ կինը տեղիս հաշտարար միջնորդի ամուսինն է՝ իշխանուհի Եվգենիա Ջորջաձէն: Պ. Տերուկովը քաղաքավարութեամբ բարձրացնում է իշխանուհուն և տանում է իւր տունը: Յանցաւորը չի կալանաւորուած յղութեան պատճառով:

Գաւառապետը վիրաւորուած է ուսի վերայ. գնդակի հարուածը բոլորովին տարել է ուսածոպի (ПОГОНЪ) հետ միասին և կաշին: Այժմս բժիշկները զարմանում են և քննութիւնն էլ սկսուած է:

Ժողովրդի մէջ լուր է պտտվում, իբրր թէ սպանութեան փորձի պատճառը եղել է յիշեալ իշխանուհու ամուսնու իշխան Դաւիթ Ջորջաձէի պաշտօնից արձակումը, թէ որքան ուղիղ է այս լուրը, ցոյց կը տայ մօտաւոր ապագան:

—

Նոյն տեղից:—Այս անցքից երկու շաբաթ առաջ սպանութեան մի ուրիշ փորձ պատահեց այստեղ, որ պակաս հետաքրքրական չէ:

Թէլաւի II-րդ գիլդի վաճառական պ. Գ.-ին տիրացու Գ. պարտ է լինում 15 րուբլի: Վերջինս 10 րուբ. վճարելով, խնդրել էր, որ մինչև առաջիկայ աշունը համբերէ և մնացած 5 ր. այն ժամանակ կը հատուցանի: Պարտատէրը չի զիջանում իւր պարտապանի աղաչանքներին, այլ կատարողական թերթը (исполнительный листъ) ձեռքին պահանջում է իւր փողը: Վերջը տեսնելով, որ տիրացուն անկարող է վճարել՝ վերցնում է դատաստանական պրիստաւի տեղ աստիճանաւոր պ. Բէգալեանին և գնում է յիշեալ տիրացուի տունը ունեցած կայքը վերգրելու: Տիրացու Գէորգը տանը չի լինում, երբ նրանք գնում են, այն ինչ հաւանում է իւր տուն թէ չէ, նրան անպատուած է զգում և ուղղակի վերայ է ընկնում պատից կախած դաշոյնին, մերկացնում է և երբ պ. Գրիգորեան փախչելիս է լինում, առաջին և ստատիկ հարուածը հասցնում է ուղղակի նրա աջ թևին՝ մէջքի կողմից: Վէրքը շատ ծանր է, ասում են, որ ոսկորն էլ ջարդած է: Գործը քննութեան տակ է, իսկ տիրացուն արդէն բանտարկուած է:

—

«Свѣтъ» թերթի ասելով Մորդովսկայ գիւղում, Բալաշովսկի գաւառում, 60 ամեայ մէկ մարդ փողի կարօտութեան պատճառով իւր երիտասարդ կնոջ ծախում է 50 րուբլիով:

—

Մեզ գրում են:—Ս. Կարապետ եկեղեցուց վերև մի խումբ թափառաշրջիկ տղաներ պարապում են աղաւնապահութեամբ, որոնցից իւրաքանչիւրը մի մի ձող ձեռքումը բռնած անդադար շվացնելով աղաւնիներ են թռցնում, ու այդ գործողութիւնը սկսվում է առաւօտեան 5 ժ.-ից և տևում մինչև երեկոյեան 7 ժ. Շրջակայքի բոլոր...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.

—

«Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ. 'ի տպար. կաթուղիկէ ս. Էջմիածնի:
1884 ՌՅԼԳ.

Ա.

Գէորգ IV-ի նախաձեռնութեամբ Մայր Աթոռի տպարանը ընդարձակ վերանորոգութիւն ստացաւ: Հարկաւ ասել պէտք չէ, որ այդ տպարանը «[illegible]» վերանորոգելով—նրա արուեստական մասի միջոցները, գործիքները և պարագաները ընդարձակելով,—Հանգուցեալ Հայրապետը մի առանձին ծառայութիւն չէր կարող համարել նոր ձեռնարկութիւնը, եթէ կանխապէս ըմբռնած չը լինէր, թէ ինչ է ս. Էջմիածնայ տպարանի նման հաստատութեան բուն նպատակը, և վերահաս չը լինէր այն էական հանգամանքներին, որոնց պահպանութեամբ միայն կարող էր այդ նպատակը մարմին առնել:

Բարեբաղդաբար հանգուցեալ կաթուղիկոսը խելամուտ է եղել այս բանին և բացել է այն ուղիղ ճանապարհը, որի հետքերը պատմութեան մէջ էին: Չը գիտեմ արդեօք այս գործում բռնած ընթացքը նոր մտքի անմիջական ծնունդն էր, թէ ս. Էջմիածնայ անցեալի հետ խորունկ և ընդարձակ հմտութիւն ունենալու արդիւնք՝—միայն այս գիտեմ որ Գէորգ IV-ը՝ ս. Աթոռի տպարանը ծաղկեալ, բարեկարգ և արդիւնաւոր պահպանելու համար հիմնեց այն բանաւոր և նպատակայարմար հաստատութիւնը, որ տակաւին անցեալ տարումը ս. Էջմիածնայ միաբանութեան յուսամիտ անդամների անհուն բաղձանքն էր:—Մեր խօսքը «տպարանական ժողովի» վերայ է: Այն՝ որ յղացել էր Ներսէսի օրով Գէորգ IV-ի ժամանակ մարմին առաւ: Այս հաստատութեան մէջ իրագործուեցաւ Կլիմեչխանեցի Շահխեան Միք. վարդապետի գրաւոր առաջարկութիւնը, որ ներկայացրած էր 1829 թ. ս. Էջմիածնայ Բարձրագոյն խորհրդարանի ժողովոյն *) և Ներսէս կաթողիկոսին:

Ինչպէս էր ըմբռնել տպար. ժողովը իւր կոչման խորին խորհուրդը, և որքան ձեռնհաս էր գտնուել իւր վեհափառ ղեկավարի կամքով և վստահութեամբ վերադրեալ պարտքը կատարելու—սրա մասին թող վկայեն նրա 15-ամեայ գործունէութեան արդիւնքները: Հարիւր քանի չափ տպագրութիւններ, որոնք ս. Էջմիածնի տպարանից լոյս ընծայուած գրքերի ցանկն են կազմում, սակաւ բացառութեամբ Գէորգ IV-ի օրհնութեան և հրամանի դրոշմն ունին, հետևաբար տպար. ժողովի ջանասիրութեան պտուղներն են: Ասել չուզեր, որ սա մի այնպիսի եռանդոտ գործունէութեան ապացոյց է, որի նմանը մինչև անգամ Մխիթարեանք եւս չեն ցոյց տուած համեմատաբար այդպիսի կարճ միջոցում՝ երբ ազգային տպագրութեան արուեստը նրանց մենաշնորհութիւն էր:

Հարկաւ շատ օգտակար կը լինէր, եթէ օր առաջ տպար. ժողովի 15-ամեայ գործառնութիւն պարագայօրէն քննութեան առնուէր: Ե՞րբ կը լինի այդ չը գիտենք: Բայց չենք կարող մոռանալ, որ արդէն ժամանակ է, որ եթէ ոչ մանրամասն քննադատութեան, գէթ հարևանցի տեսութեան առնել տպար. ժողովի ջանաշխատ գործունէութեան այն մասը, որ մեր կարծիքով հայրենագիտութեան ուսման նըկատմամբ՝ բանասէրի համար շատ հետաքրքրական է և յոյժ կարևոր:

Եթէ ազգային դաստիարակութեան հիմքը հայրենագիտութիւնն է, իսկ հայրենագիտութեանը՝ պատմական ուսումը, ուրեմն իւրաքանչիւր վաստակ, որ նուիրած է պատմական երկասիրութիւնները հրատարակելու և ժողովրդականացնելու, միշտ երախտագիտութեամբ պիտի ընդունուի. այս տեսակէտով նայած գործի վերայ, անհնարին է չը գնահատել տպար. ժողովի աշխատութիւնը, որ նա առանձնապէս ջանք է դրել մեր նախնի մատենագրութեան պատմական մասին վերաբերեալ բնիկները հրատարակելու: Սա ինքն ըստ ինքեան նշանաւոր ծառայութիւն էր: Բայց առաւել մեծ էր այդ ծառայութեան արժէքը, եթէ իմանանք՝ թէ մեր պատմական կեանքի ո՛ր շրջանի յիշատակարանների վերայ տպար. ժողովը դարձրել էր իւր ուշադրութիւնը:

Բ.

Մեր նախնի մատենագրութեան արդիւնքների գլխաւոր հրատարակիչները-Մխիթարեանք ինչպէս բանասէրին յայտնի է, առանձնապէս աշխատում էին տպագրութեամբ լոյս ածել այն գանձերը, որոնք տիպար ու օրինակ է ոստանիկ լեզուի սքանչելի ճաշակին ու ոճին: Հետամուտ լինելով այդ մեռած լեզուն կենդանացնելու՝ նրանք խուսափում էին այն բոլոր մտաւոր վաստակների տպագրութիւնից, որոնց մէջ ռամիկ ոճը բոլորովին աղաւաղել էր ոստանիկ լեզուի ընտիր ու մաքուր ճաշակը: Եթէ սրա վերայ աւելացնենք մի քանի կրօնական հանգամանքներ, որոնք կապուած էին Մխիթարեանների կրօնական համոզմունքների հետ, կիմանանք թէ ինչի մի շարք պատմագիրներ, որոնք թէև վերին աստիճանի հետաքրքրական բովանդակութիւն ունէին, բայց նախնեաց լեզուի բոլորովին խանգարուած ու գռեհկացած շրջանի—երկաթեայ դարի՝ արդիւնք լինելով, Մխիթարեանների շնորհով կատարեալ անյայտութեան և մոռացութեան տրուեցան:

Այն ինչ պատմագիրները իրենց հետաքրքրական բովանդակութեամբ այնքան մեծ նշանակութիւն ունէին աշխարհիկ ժողովրդի կրթութեան համար, որ հազիւ թէ տպագրական արուեստը մեր մէջ սկիզբն էր առել,—և ազգային մամուլի նահապետը ամենից առաջ այս պատմագիրներից է ընտրում իւր տպագրութեան նիւթը: Առաքել վարդապետի և Զաքարիա Սարկաւագի երկասիրութիւնները, որոնք XVII դարի ազգային պատմութեան յիշատակարաններն են՝ ամէնքից առաջ լոյս են տեսնում:

Տարաբաղդաբար յաւերժայիշատակ Ոսկանի ընտրած ճանապարհը շատով խափանվում է: Մխիթարեանք շուտով տիրապետում են ազգի նոր արթնացած մտքի վերայ, և իւրաքանչիւր գիր, որ Վենետիկի հանրածանօթ կաղմը չունէր, չէր կարողանում գրաւել մեր ուշադրութիւնը: Այս հանգամանքն էր պատճառը, որ մեր յիշած պատմագիրները, որոնք կարող էին մեզ առաւել շատ բան պատմել, շատ օգտակար խրատներ տալ, շատ մեծ օգնութիւն առնել հայրենագիտութեան ուսումը ժողովրդականացնելու՞ քան թէ նախորդ շրջանների պատմագիրները, մեր նոր սերունդին անյայտ մնացին:

Տպարանական ժողովը կարծես թէ այս պակասը լրացնելու ձգտումներով է համակվում: Ձեռագիրները լոյս ածելու ձեռնարկութեան մէջ՝ նա իւր ուշադրութիւնը դարձնում է մոռացութեան տրուած պատմագիրների վերայ: Տասնի չափ պատմական ժամանակագրութիւններ, որոնք կամ ամենևին անյայտ էին տպագրութեամբ, կամ անցեալ դարերի տպագրութիւն գոլով—այն ևս սխալ և անհարազատ ձեռագիրներից, հազուագիւտ էին դարձել, տպար. ժողովի շնորհքով այսօր բանասէրի բաժին են եղել: Դրանց կարգին է և այն պատմական ժամանակագրութիւնը, որ մեր առաջն է և մեր մատենագրական ակնարկի առիթը:

(Կը շարունակուի)

---

*) Այս ժողովը, որ 1856-ի մարտի 11-ի օրէնսդրութեամբ (положеніе) օրինաց նուիրականութիւն է ստացած Ռուսիայում՝ Սինոդ անունով Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ հաստատուած է Դանիէլ կաթողիկոսի կանոնական կոնդակով 1805-ին, սեպ. 13-ին: Հետաքրքրական է իմանալ թէ ինչ ընդունելութիւն գտաւ այդ հաստատութիւնը Թրքահայոց մէջ: Կ. Պօլսոյ Փոլեան Աբրահամ պատրիարքի՝ 1814-ին մայիսի 3-ին գրած նշանաւոր պատասխանը, որ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ այսօրուայ անունուած ներքին պառակտումը, եթէ չասենք հերձուածը, այդ օրից իւր սկիզբն ունի...

բնակիչները ձանձրացել են. բայց ոստիկանութիւնը դեռ ուշադրութիւն չէ դարձնում։ Եթէ այդ խումբը ամբողջ օրերով պատերին Թաղնելով է պարապուած, ուրեմն ինչ միջոցով է ապրում դա, արդեօք ում պարտաւորութիւնն է այս մասին մտածելու։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ։—Տեղիս Հաշտարար դատաւորի եղբայր՝ պ. Բաքրաձէն, քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Գարգասալիձէի և Հեռագրական ծառայող պ. Գրիգորիշվիլի ընկերութեամբ փայտի մէկ Հարուածով մէկ աղքատ և բազմանդամ Հայ ընտանիքին զրկեց իր միակ աշխատող և խնամող անդամից։ Մարդասպանները ազատ կերպով ման են գալիս և մեզ մեծ զարմանք պատճառում։ Գործը յանձնուած է (քննիչին)։

ՎԱԶԵՐԻՆ ՎՆԱՍԱՏՈՒ ՄԻՋԱՏՆԵՐԸ։

Բացի Փիլօքսերայից կան և ուրիշ բազմաթիւ միջատներ, որոնք երբեմն մեծ վնասներ են պատճառում վազերին։ Սրանցից գլխաւորներն են ինչպէս և յիշել էինք առաջ, 1) Pyrale (Պիրալ), 2) Gribouri (Գրիբուրի) 3) Attelabe (Ատլաբ) 4) Altise (Ալթիզ) 5) Cochylis (Կոշիլիս) և 6) Noctuele Նոկտուէլ։

Ա. Pyrale (Pyralis Pileriana). Պիրալին կարելի է ընդունել ինչպէս վազի ամենաերկիւղալի Թշնամուն՝ Փիլօքսերայից յետոյ։ Այդ միջատը աՀագին վնասներ էր պատճառել Բուրգոնիայի այգիներին և շատ տարածուած է Ֆրանսիայի Հարաւային կողմերում։ Պիրալը տարեկան միայն մի սերունդ է արտադրում։ Օգոստոսին ձուերն ածում է (մօտ վազի քսան տերևների վրա), որից մի ամսից յետոյ դուրս են գալիս Թրթուրներ, որոնք ձմեռը անցկացնելով վազի կեղևի տակ, դուրս են գալիս միայն մայիսին և բարձրանում են վազի նոր ոստերի վրայ։ Այդ տեղ նրանք սկսում են միատեղ կապել տերևները իրենց գործած Թելիկներով, որի տակ և բնակուելով, շարունակ տերևները կրծում են և այդպէսով պաՀպանում են իրենց կեանքը, մինչև որ Թրթուրը Հասնում է իր կատարեալ զարգացման։ ԱռՀասարակ իւրաքանչիւր վազի վերայ մօտ 50—60 Թրթուրներ են լինում և Հասկանալի է ուրեմն, Թէ ինչ վնասներ կարող են պատճառել դրանք այգիներին։ Այդ պրուԹեամբ նրանց շատ Հեշտ է գտնել վազերի վրայ։ Յուլիս ամսին նրանք ենԹարկվում են մի նոր ձևափոխուԹեան՝ պատենաւոր (chrysalide) դառնալու Համար. սրանք առՀասարակ կախուած են լինում Թրթուրների շինած բնակարաններից։ Պատեանքից յուլիսին դուրս են գալիս փոքրիկ ԹիԹեռներ, որոնց Թևերը գորշ են և զանազան գոյների. սրանք իրենց ձուերը ածում են օգոստոս ամսին։

Այս միջատը ոչնչացնելու Համար գործ են ածում գլխաւորապէս. [illegible] ջուր ծծումբ և ծխախոտ։

1) Ջուրը Հարկաւոր է եփ տալ և նրանով կամաց կամաց ջրել վազի Հին ոստերը, որովՀետև Թրթուրը դրանց կեղևի տակն է լինում և եփ տուած ջրից ոչնչանում է,

2) Ծծումբի գործածելը լինում է վազի յատելուց յետոյ. դրա Համար մի արկղիկով ծածկում են վազը և նրա տակը 3 րոպէ շարունակ ծծումբ են այրում։

3) Ծխախոտ, որը պատրաստվում է 100 մաս կոմի մէկից և 5 մաս նաւԹից՝ խառնած վրձինով քսում են վազերին։

Այս բոլոր միջոցները Հարկաւոր է գործ դնել վազը զարԹնելուց առաջ։

Բ. Gribouri (Adoxus vitis) Գռիբուրին կոշտ Թևերով սևագոյն ճանճ է, որի Թրթուրները Հողի տակ վազի արմատներին մեծ վնասներ են պատճառում և միշտ Համարեա կեղևի տակ են ապրում, ուստի շատ դժուար է նրանց գտնելը։ Երբեմն նրանք այնպէս բազմաԹիւ են, որ ամբողջ այգիներ են ոչնչացնում. շատ անգամ այդպիսի վնասները սխալմամբ Փիլօքսերային են վերագրում։ Յուլիս ամսին նրանք արդէն ձևափոխուած՝ դուրս են գալիս Հողի տակից և սկսում են կրծել վազի տերևները և զանազան խազեր Թողնել նրանց վրայ. այդ պատճառաւ էլ նրանց միշտ անուանում են „գրող“։ Դրանք մի փոքր ձայն լսելուց, իսկոյն ընկնում են Հողի երեսին և երկար ժամանակ անշարժ են մնում և մեռած ձևանում. պէտք է ուշք չը դարձնել այս խաբեբայուԹեանը և ամեն առաւօտ պէտք է Հաւաքել և ոչնչացնել նրանց։ Թրթուրի ոչնչացնելու դէմ գործ են ածում խարդալի քամուածք, որը Հողի Հետ խառնուած իր Հոտով ինչպէս Թոյն՝ ներգործում է նրանց վրայ։

Գ. Attelabe (rynchites Betuteti)—Ատլաբը կոշտ Թևաւոր՝ ոսկեզօծ ճանճի նման մէկ միջատ է, որը իր փոքրիկ կնճիԹով ծակծկում է վազի տերևի կոԹը և Թառամեցնում, որ կարողանայ նրա մէջ ՀեշտուԹեամբ փաԹաԹուել։ Ատլաբը երբեմն աՀագին վնասներ է պատճառում այգիներին՝ ոչնչացնելով վազի շնչառուԹեան գլխաւոր գործարանը. այսինքն տերևը և խաղողի ՀասունուԹիւնը յետաձգել։

Այդ ճանճը իր կլորած տերևի մէջ մօտ 7 ձուեր է ածում, որոնցից շուտով դուրս են գալիս Թրթուրներ և սկսում են կրծել տերևները։ Այդ Թրթուրները 15 օրից յետոյ Հողի տակն են անցնում և ենԹարկվում զանազան կերպարանափոխուԹեանց։ Երբեմն պատաՀում է, որ Հոկտեմբեր ամսին, եԹէ եղանակը չոր է, նրանք կրկին դուրս են գալիս բոլորովին կերպարանափոխուած և սկսում են վազերի տերևները կրծել, բայց եԹէ եղանակը ցուրտ է լինում, այն ժամանակ նրանք մնում են Հողի տակ մինչև միւս տարուայ յուլիս ամիսը։ Երբեմն պատաՀում է, ի Հարկէ, որ Հոկտեմբերի ցուրտը նրանց ոչնչացնում է։ Բայց առՀասարակ այդ միջատներից ազատուելու Համար, Հարկաւոր է յուլիսին Հաւաքել բոլոր կլորած տերևները, որոնց մէջ փաԹաԹուած են Թրթուրները՝ և այրել։

Դ. Altise (Altica ampelophaga). ԱլԹիզը նոյնպէս մի գորշ Թևաւոր փոքր ճանճ է, որ մի ամսում վերջացնում է իր բոլոր ձևափոխուԹիւնները։ ԱլԹիզի Թրթուրը ձմեռը անցկացնում ծառի կեղևի տակ կամ պատեանի մէջ և երբ ապրիլին վազը զարԹնում է, Թրթուրները իսկոյն անցնում են նրա վերայ և սկսում են կրծել նոր տերևները և մինչև անգամ ոստիկները։ ԱլԹիզը մօտ 20 ձուեր է ածում, որոնք միշտ վազի տերևից կպած են լինում, այդ ձուերը մինչև ութ օր բացվում են, և Թրթուրները սկսում են կրծել տերևները, դրանք մինչև 15 օրը բաւականին զարգանում են և ձևափոխուԹեանը ենԹարկուելու Համար մտնում են Հողի տակ։ Սրանց պատենաւորները (nymphes) նախ ճերմակ և յետոյ սևագոյն են լինում, որոնք մինչև ուԹ օրը փոխվում են կատարելագործուած որդի։ Այդ որդը ոչնչացնելու Համար Հետևեալ միջոցներն են գործածում. ա) մի ԹիԹեղեայ ձագարի սարկից քաշի են կախում և վազի տակ բռնում, մի փայտով տերևներին այնպէս են խփում, որ նրա վրայի որդերը ցած են Թափվում ձագարի մէջ, որից յետոյ շատ Հեշտ է ոչնչացնելը, բ) յուլիս ամսին կտրում են վազի ներքին շերևից 4—5 տերևներ, որոնց վերայ են լինում առաջին ալԹիզի Թրթուրները, և այրում, գ) այգի մէջ մի երկու օր Հաւեր կամ ուրիշ տնային Թռչուններ են պաՀում, որոնք ոչ սակաւ փչացնում են այդ որդերին։

Ե. Cochylis (cochylis Roserana). Կոշիլիսը մի փոքր ԹիԹեռ է, որի Թրթուրը մեծ վնասներ է պատճառում այգիներին։ Այդ ԹիԹեռը տարեկան երկու սերունդ է արտադրում, առաջինը ապրիլից մինչև յուլիսի վերջը, իսկ երկրորդը օգոստոսից մինչև ապրիլը։ Առաջին ծնունդի ԹիԹեռը շատ փոքրիկ է և դեղնագոյն, իսկ Թրթուրը կանաչ է. սա վազի տերևներից և խաղողի ողկոյզից մի բնակարան է շինում, որտեղ և ենԹարկվում է իր ձևափոխուԹեանց։ Իսկ երկրորդ ծնունդի Թրթուրը, որ կազմակերպվում է սեպտեմբերին, կարմրագոյն և աւելի վտանգաւոր է քան Թէ առաջինը որովՀետև սա ուտում է միայն խաղողը և այսպիսով ոչնչացնում է տարուայ բերքը։

Այդ միջատի ոչնչացնելը շատ դժուար է և մինչև անգամ անկարելի է. այլ և այլ միջոցներից գործադրելին է Հետևեալն. երբ նկատվում է նրանց արշաւանքը այգու մէջ, այն է օգոստոսին, առանց ուշացնելու պէտք է սկսել այգեկուԹը, Թէև խաղողը Հասած էլ չը լինի, որովՀետև եԹէ սպասեն, բոլոր պտուղը կարող է զոՀ գնալ։ Այդ միջոցով մինչև անգամ կարելի է ոչնչացնել բոլոր որդերը։ Այդ կոշիլիսը առՀասարակ ճերմակ խաղողի վերայ է լինում։

Զ. Noctuelle (Noctua Aquilina). Նոքտուել կամ գիշերաԹիԹեռը մի գորշ միջատ է, ինչպէս և իր Թրթուրը. սա երբեմն կարող է աՀագին վնասներ պատճառել այգիներին։ Ցերեկը դրանք Հողի տակ են լինում, և միայն գիշերներն են դուրս գալիս և կրծում են վազի տերևները և շատ անգամ ոստիկները։

Իրենց ոչնչացնելու Համար Հարկաւոր է վազի տակը մի քանի փոսեր փորել, որոնց մէջ Թրթուրները Հաւաքվելով, վերցնում են և ջարդում կամ այրում։

Սրանով վերջացնում ենք Համառօտ կերպով միջատ-պարազիտների շարքը, և Հետևեալ անգամից կը սկսենք բուսական պարազիտը, այսինքն սունկի վերաբերեալ, որը բնակվում է վազերի վերայ։

Գ. Ռասու.

Մոնպելյէ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, 21 մայիսի։—Այս երկրորդ տարին է, որ Երևանը իր գաւառներով անսպասելի կերպով ենԹարկվում է բնուԹեան անողոք պատժին։ Անցեալ տարուայ մայիսի մէկին մինչ դեռ ժողովուրդը պատրաստուած է եղել այդ օրը տօնել զուարճուԹեամբ, յանկարծ դաշտերը ծածկուել է ձեան սպիտակ սաւանով, որից վնասուելով խաղողի որԹերը՝ այգեգործ պարսիկը զրկուել է իր օրական ապրուստից. շատերը իրենց գոյուԹիւնը պաՀպանելու Համար տեղական Հարստահարիչ վաշխառուներից 60—70% տոկոս վճարելով փողեր էին վերցրել այն յուսով, որ այս տարի պտղաբերուԹիւնը առատ կը լինի և այգիներից ստացած օգտից կը վճարեն Թէ իրենց պարտքերը և Թէ իրենց ապրուստը կը ՀայԹայԹեն։ Բայց ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ այս տարի ժողովուրդը մանաւանդ այգեգործ դասակարգը ենԹարկուել է առաւել դժբախտուԹիւնների քան անցեալ տարի։

Նախ՝ այն պատճառով, որ այս տարի այժմեանից իսկ խաղողը այգիներում շատ սակաւ է երևում, իսկ մրգեղէնը բոլորովին ոչնչացել է, երբէք չը տեսնուած Թրթուրների, որոնց անՀամեմատ շատուԹիւնից, որին ժողովուրդը Աստուծոյ պատուՀաս է Համարում, իսկ Թրթուրի երևալու առաջն առնելու Համար Երևանի ժողովուրդը շատ անտարբեր է։

Երկրորդ՝ Երևանը չ'ունենալով ճանապարՀային դիւրին ՀաղորդակցուԹիւն Անդրկովկասեան երկաԹուղու Հետ, պտղաբերուԹիւնը արտաՀանելու Համար չը կայ որևիցէ յարմարուԹիւն. արտաՀանողին առնուազն Հարկաւոր է վեց օր մինչև սայլերով Ազստաֆայի երկաԹուղու կայարանը տեղափոխելու, իսկ այդ ժամանակամիջոցում պտուղները փչանում են։ Այդ պատճառով էլ այգեգործը ընտրել է երկու ճանապարՀ և գինի և օղի պատրաստել։ Դրանցից առաջինը չէ տալիս սպասած օգուտը, որովՀետև կանոնաւոր գինեգործներ չը կան մեզանում, որի պատճառով Երևանի գինին ծախվում է շատ պակաս գնով։

Վերջին տարիներում միայն մի Հարուստ դրամատիրոջ 'որդին' պ. Ափրիկեանցը գնալով արտասաՀման սովորեց գինեգործուԹեան արՀեստը և վերադառնալով Հայրենիք՝ պարապում է մասնագիտօրէն նոյն արՀեստով, որով և Օդեսայում անցեալ տարին է որ պ. Ափրիկեանցի գինին արտաՀանվում է և ընդունելուԹիւն է գտնում Եւրոպացի վաճառականներից։

Օղին էլ չէ կարողանում օգուտ տալ իր մշակողին, որովՀետև շատ անգամ պատաՀում է, որ օղի պատրաստողը, բացի այն որ ոչ մի օգուտ չէ ստանում օղուց, այլ ակցիզի Հարկն էլ պէտք է իր գրպանից տայ։ Հենց այդ պատճառով էլ Երևանի գաւառի Զանգիբասար և Գառնիբասար մաՀալներում գիւղացիներից շատերը այգիները արմատաՀան էին արել և խաղողի որԹերը բերելով Երևան աննշան գնով վաճառվում էին, և եԹէ այսպէս շարունակուի, գուցէ մի քանի տարուց յետոյ Երևանի նաՀանգի կանաչազարդ այգիների փոխարէն անապատներ կամ արօտատեղեր։ Այդ իսկ պատճառով այժմ այգիների գինը անսպասելի կերպով ընկել է. այն այգին, որը սրանից տասը տարի առաջ արժէր 10 Հազար րուբլի, այժմ երկու Հազարով էլ առնող չը կայ. լուր է տարածուած որ ժողովուրդը կամենում է խնդրամատոյց լինել բարեխնամ կառավարուԹեանը, որպէս զի վերստացի առաջն առնուի և ակցիզային կանոնները փոքր ինչ փոփոխուԹեան ենԹարկուին յօգուտ ժողովրդի։ Յուսանք և սպասենք։

Սմ. Գիա.

ԱՐԴՈՒԻՆ, 17 մայիսի.—Արդուինը գտնվում է Ճորոխի ձախ ափում գտնուող լերանց կողքերի վրայ և չորս կողմից շրջապատուած է գեղեցիկ պարտէզներով, որոնք զարդարուած բազմատեսակ պտղատու ծառերով. շրջապատող լեռներն էլ ծածկուած են անտառով։ Արդուինի անտառներում և պարտէզներում գտնվում են սառը և առողջարար ջրեր, որտեղ Հաւաքվում են կիւրակի օրերով ժամանակ անցկացնելու քաղաքիս բնակիչները։ Քաղաքում գտնվում են երեքյարկանի և երկյարկանի տներ, շրջապատուած պարտէզներով։ Այսպիսով, Արդուինը ունի մի գեղեցիկ և Հրապուրիչ տեսք։

Քաղաքիս «Կորգուլ» կոչուած մասը շինուած է ուղղակի Ճորոխի ափին և շրջապատուած է նոյնպէս պարտէզներով. Թէ սա և Թէ միւս մասերը այնքան զանազանվում են կլիմայի կողմից միմեանցից, որ Հազիւ Թէ այդպիսի զանազանուԹիւն կարելի լինի տեսնել ուրիշ քաղաքներում. այս ապացուցանելու Համար ես բերում եմ մի քանի օրինակներ. այսպէս երբ Կորգուլ մասում ծառերը արդէն տերևներ են արձակում, քաղաքիս միջին մասում դեռ կոկոնները Հազիւ են երևում, իսկ Խաչբերդ և Կօլօրտօ մասերում կարելի է տեսնել ձիւնով ծածկուած տեղեր, այն ժամանակ երբ Կորգուլում Թութը և կեռասը Հասած է։ Ձմեռը Կորգուլում բարեխառն կլիմայ է, միւս մասերում ցուրտը Հասնում է Ռ. ջերմաչափով 14—16°։

Արդուինում չը կայ մէկ ՀարԹ և կանոնաւոր փողոց, դրա վրայ պէտք է աւելացնել՝ և անմաքրուԹիւնը և փողոցների նեղ լինելը, որտեղից երկու ձիաւորներ չեն կարող անցնել, կան այնպիսի փողոցներ, որտեղից մի մարդ Հազիւ կարող է անցնել. կարելի է ասել, որ Արդուինը աւելի գիւղ է քան Թէ քաղաք, չը նայելով իր 6000-ից աւելի բնակիչներ են։

Արդուինի միակ և ամենայարմարաւոր ճանապարՀ, ԲաԹումի և Կովկասի կամ Ռուսաստանի քաղաքների Հետ Հաղորդակցելու Համար—Ճորոխ գետն է, որը, մօտաւորապէս երեք վերստ Հեռու է գտնվում Ա. քաղաքիս կենդրոնական մասից, աւելի անտանելի է այդ ճանապարՀը նրանով, որ միշտ պէտք է իջնել այդտեղ քարոտ և նեղ ճանապարՀով։ Այդտեղ կայ մի կամուրջ, որը Ճորոխի երկու ափերը միացնում է միմեանց Հետ և այդտեղ Ճորոխը սեղմուելով երկու կողմերից, և կրճից դուրս Հոսելով սրընԹաց կերպով շառաչ է Հոսում։ Ճորոխի միւս ափին շինուած են մի քանի կրպակներ, որտեղ առՀասարակ կանգնում են մակոյկներ և դուրս են բերում ապրանքները, որոնց յետոյ ձիերի վերայ բարձելով քարափների վրայից բարձրանալով բերում են քաղաք։

Գարնան ժամանակ Ճորոխի վրայով այստեղից կարելի է չորս ժամում Հասնել ԲաԹում (96 վերստ), այն ինչ գետը փոքրանալու ժամանակ Հարկաւոր է երկու օր, որի ժամանակ և վտանգաւոր է նաւել Ճորոխի վրայ նրա մէջ գտնուող աՀագին մեծուԹեամբ քարերի պատճառով։

Ճորոխի վրայ ճանապարՀորդելու ժամանակ աչքի են ընկնում ժայռերի գագաԹներին ամրոցների և բերդերի աւերակները։

Որքան որ Արդուինից դէպի ԲաԹում Հեշտ է գնալը, այնքան էլ ԲաԹումից Արդուին վերադառնալը դժուար է.— այդտեղ Թիավարների ոյժը չէ բաւականանում և նրանք ստիպվում են ԲաԹումից մինչ Արդուին, որպէս անբան արարածներ [illegible] և մէկ ափից միւս ափը անցնելով քաշելով մինչև Արդուինը Հասցնել. իսկ դրա վարձատրուԹիւնը շատ չնչին է։

Ճորոխի ձախ ափում կամուրջի մօտ գտնուող մի աՀագին ժայռի վրայ դեռ մինչև այժմս կայ մէկ աւերակ բերդ, որը Թրքաց տիրապետուԹեան ժամանակ քաղաքային յանցաւորների և մարդասպանների պատժարանն էր. այդտեղից յանցաւորներին գլորելով յանձնում էին Ճորոխի կատաղի ալիքներին։

Մէկ օր արևը մայր մտնելուց յետոյ ես իմ ընկեր պ. Ռ. Հեա[illegible] ուղղևորուեցինք դէպի այդ բերդը. երկար ու նեղ լեռնային անցքերը անցնելուց յետոյ Հասանք բերդի ստորոտը։ Մենք սկսեցինք բարձրանալ քարուկիրեայ աստիճաններով մի բաւական մեծ անցքից մենք մտանք բերդը։ Մեր աչքի առաջ ներկայացաւ մի երկրորդ պարիսպ, որը առաջինից աւելի բարձր էր։ Այդ տեղից պարզ երևում էր Արդուինը և Ճորոխը։

Բերդի մէջ մենք նկատեցինք խոռոչներ, որոնք ստորերկրեայ ճանապարՀով մէկ ժամանակ Հաղորդակ-

ցութիւն չէին ունեցած ձորոխի հետ. ինչպէս պատմում են, այդ խողովակները բերդի պաշարման ժամանակ ջուր են մատակարարելիս եղել բերդի բնակիչներին.

Այդ տեղ որքան որ մենք աշխատեցինք գտնել մի որևէ արձանագրութիւն, չը յաջողուեցաւ. Այդ տեղից մենք բարձրացանք միջնաբերդը, որտեղ նոյնպէս ոչինչ չը գտանք ուշադրութեան արժանի. այդտեղ պատերի մէջ շինուած են փոքրիկ պատուհանների նման անցքեր, որ տեղերից ամեն կողմը կարելի է դիտել. Մենք այդտեղից մէկ անգամ էլ նայեցինք „Կողզուշի“ ու դուրս եկանք բերդից. Մենք բաւականացանք միմիայն տեղացիների պատմութիւնով, որոնց նայելով, դա եղած է վրացիների բերդ, Թամար թագուհու ժամանակից.

Ցոլակ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌՈՒՄԻԼԻԱՆ 1878—1885 Թ.

—

Բեռլինի ատեաժողովում հաւաքուած քաղաքագէտների մեծ մասը չատ թերի գաղափար ունէին բուլղարական ժողովրդի մասին. Նրանք կասկածում էին բուլղարացիների ընդունակութեան մասին՝ անկախ կառավարելու իրենց երկիրը, որը այն ժամանակ չատ ընդարձակ էր թւում. Այստեղից է ծագում բուլղարական հողի երկու առանձին քաղաքական մասերի բաժանելու գաղափարը. Այստեղ պէտք է աւելացնել, որ ռազմագիտական յարմարութիւնները անյայտ չէին բաժանման քաղաքականութեան, որի գլխաւոր սուտ չարժողը և պաշտպանը լորդ Բէկոնսֆիլդն էր.

Բուլղարական ազգասիրութեան վիճակուած այս նոր փորձառութիւնը ապացուցեց, ասում է „Echo des Balkans»-ը, որ այն ժողովուրդը, որին Եւրոպան հաւատ չընծայեց, իր առաջ մայր չնորհիւ կարողացաւ խոնարհեցնել անյաղթելի հանգամանքների հոսանքի առաջ և որ նա քաղաքական կեանքի մէջ յայտնուեցաւ աւելի հասունացած քան թէ առաջ կարծվում էր.

Ճշմարիտ, որ այն մարդիկ, որոնք ատելութեան և կուսակցական կրքերից կուրացած չեն, պարզ տեսնում են, որ բուլգարները, որոնց համարում էին կրթութիւնից զուրկ և երկիրը կառավարելուն անընդունակ,—տիրապետում են այն բոլոր անհրաժեշտ յատկութիւններին, որոնք կարևոր են պետութիւնը կառավարելու գործին. Այս ճշմարտութիւնը համահաւասար վերաբերում է ինչպէս բուլգարական իշխանութեան, այնպէս էլ Ռումելիային. Այն օրից, երբ հիմք դրուեցաւ նոր կարգերին Բալկանի երկու կողմերում տարածուող երկիրը կառավարվում է տեղական ատենանաւորներով կատարեալ հանգստութիւնով. Այժմ ոչ ոք իրաւունք չունի ասելու, որ բուլղարները օժտուած չեն ինքնավարութեան անհրաժեշտ ըմբռնումներով. Բուլղարները խաղաղ աշխատասէր և տնտեսական ժողովուրդ են, և նրանք երբէք կարօտութիւն չեն զգացել վարչական ընդունակութիւն ունեցող մարդիկների մէջ. Բուլղարները միշտ սէր են ունեցած դէպի կրթութիւնը և մինչև անգամ թրքաց տիրապետութեան ժամանակ, չատ երիտասարդներ դիմել են Կ. Պոլիս և Եւրոպայի միւս քաղաքները կրթութիւն ձեռք բերելու նպատակով, այնպէս որ, երբ այս երկրին վիճակուեցաւ ինքնուրոյն լինելու, նա արդէն իր մէջ գտաւ՝ տեսականապէս վարչական գործի համար պատրաստուած բաւական թւով մարդիկ.

Այս վայրկեանից երկիրը սկսում է նըկատելի կերպով առաջ գնալ. Չը նայելով վերջին պատերազմից պատճառուած բոլոր թշուառութիւններին և թուրքերից քրիստոնեաների կրած անթիւ հալածանքներին, Արևելեան—Ռումելիայի ազգաբնակութիւնը վերջին հինգ տարիներում աւելացաւ 100,000 հոգով.—մշակուած դաշտերի տարածութիւնը մեծ չափով ընդարձակուեցաւ, գիւղական բնտանիքները ազատուելով թուրքերից և զանազան վաչխառու-կապալառուներից, հետզհետէ ապահովութիւն և բաւականութիւն ձեռք բերին. Զարգործութիւնները և հասարակական սեփհականութիւնների յափշտակութիւնները տեղի տուեցին խիստ կարգապահութեան. կրթութիւնը տարածվում է, օրէնքը առանց կոծի և ազգութեան խտրութեան բոլորի վերայ նայում է համահաւասար. Նոյն յառաջադիմութիւնը նկատվում է և բուլղարական իշխանութեան մէջ. Սկզբնական կրթութիւնը մուտք գործեց հասարակութեան բոլոր դասակարգերում. օրէնքի առաջ հաւասարութիւնը—բացարձակ է. Միւս կողմից նիւթական դրութիւնը, ճանապարհների հաղորդակցութեան դիւրութիւնները և ընդհանրապէս հասարակական բարեկեցութիւնը արագութեամբ բարձրանում են, ինչպէս և Ռումիլիայում.

Արևելեան—Ռումելիայի կառավարութիւնը, բուլղարական իշխանութեան նման, յանդիմանում է մուսուլմանների չարունակ գաղթականութիւնը, որը ինչպէս ոմանք կարծում են, չի կարելի վերագրել կառավարութեան դէպի թուրքերը ունեցած խիստ վերաբերուելուն. Թուրքերը թողնում են իրենց բնակութիւնները նրա համար, որ նրանց կրօնը և բարքը թոյլ չեն տալիս նրանց ապրելու քրիստոնեայ կառավարութեան իշխանութեան ներքոյ. Պէտք է մտաբերել այն, ինչ որ արդէն կատարուել է Սերբիայի և Ռումինիայի մէջ և ներկայումս էլ կատարվում է Ռումինական Դոբրուջայում և մանաւանդ Յունաստանի պատկանող Եպիրոսում և Թեսալիայում. Ամեն տեղերից թուրքերը գաղթեցին և մի թէ կարելի է եզրակացնել թէ կառավարութիւն և ազգաբնակութիւնը ոյժով ստիպեցին նրանց գաղթելու.

Ի հարկէ չէ կարելի և լռութեամբ անցնել այն սխալները, որոնք յայտնուեցան առաջին գործողութիւնների ժամանակ՝ ինչպէս Բուլղարիայում, այնպէս էլ Ռումէլիայում, — սխալներ, որոնք ծագում են պետական փորձառութեան պակասութիւնից. Բայց այդ փոխադրուողական շրջանը անցաւ արագութեամբ և երկիրը չը յապաղեց կանոնաւոր կեանքը մտնելու. Այդպիսով բուլղարները արժանի դառուեցան այն գովքերին, որոնք բերուած են նրանց ազատողներից և դէպի որոնք բուլղարները պահպանում են յաւիտենական երախտագիտութեան զգացմունք.

Դժբաղդաբար Արևելեան—Ռումելիայի սահմանադրութիւնը գործի մէջ ցոյց տուեց չատ պակասութիւններ, որոնք արգելք էին դառնում երկրին՝ հասնելու այն նիւթական և մտաւորական յաջողութիւններին, որոնց նա ընդունակ էր իր բնական յատկութիւնների չնորհիւ. Բայց այս սխալը վերաբերվում է Բեռլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին և կատարեալ հիմք կայ յուսալու որ Արևելեան—Ռումիլիայի օրէնքների քննութեան ժամանակ ի նկատի կառնուին երկրի չահերը և օրէնքները համապատասխան կը դառնան ազգաբնակութեան կեանքի պահանջներին.

Ամփոփելով մեր ասածները, կարելի է հաստատապէս ասել, որ Եւրոպայի արած փորձը՝ բուլղարներին ինքնավար կեանքի՝ ընդունակ լինելու մասին,—չատ բարեյաջող հետևանքներ ունեցաւ. Կարգը և հանդարտութիւնը թագաւորում է երկու Բուլղարիաների մէջ. Երկրին մէջ արմատացած աւազակութիւնը ոչնչացաւ, աղքատութիւնը գործում է կատարեալ ապահովութեան մէջ և գուսբ ճանում է իր աշխատանքի վայելած պտուղներով. Հասարակական և մտաւոր ազատութիւնը գրեթէ անսահման է. Կառավարութիւնը անյապաղ բաւականութիւն է տալիս բնակիչներին մինչև անգամ ամենաաննչան գանգատներին, եթէ նրանք չեն անցնում օրէնքի սահմաններից. Այս բոլոր բարեյաջող հետևանքները արդիւնք են կազմակերպութեան այն ձևին, որի հետ բուլղարական ժողովուրդը իր անկախ կեանքով եօթը տարիների ընթացքում (1878—1885) կարողացաւ չաղկապուել.

(Русск. Кур.)

—

ԵԳԻՊՏՈՍ.—„Polit. Correso." լրագրի Ալէքսանդրիայից ստացած տեղեկութիւններին նայելով, այն աշագին տարածութեան վերայ, որ ձգվում է Ալէքսանդրիայից Տրիպոլիսի միջով մինչև Տունիսի սահմանագլուխը, պատրաստվում էր մի չարժողութիւն, որի առաջը, եթէ իր ժամանակին չ՚առնուէր, կարող էր աւելի վատ հետևանքներ ունենալ քան Սուդանի ապստամբութիւնը, որին չատ նմանում է. Այժմ արդէն ապացուցուած է, ասում է Վիէննայի թերթը, որ վերոյիշեալ ծովափը ամբողջովին է հանդիսանում ամեն տեսակ ռազմաթերաց և պաշարեղէնաց ապստամբների համար. Մի քանի ժամանակ սրանից առաջ Ալէքսանդրիայից դէպի արեւելք գտան այն նաւին, որ տակառներով վառօդ էր կրում դէպի Սուդան. Նրան պատահարաց հանդիպեց պահապան չէջ-ուէ նաւը, բայց սա կարողացաւ ազատուել ծովը նետելով իր բոլոր բեռն. Այս տեսակ փաստերի հիման վերայ եգիպտական կառավարութիւնը մի քանի միջոցներին ձեռնամուխ եղաւ, որոնք սակայն բաւական չեն չարիքը արմատախիլ անելու. Ծովեզերքը հսկող զօրագնդի գլխաւոր Միրլէմասս-Բէյին պահապանների մի գունդ ուղարկեց աւելի լաւ հսկողութիւն գործ ածելու այն ծովեզերի վերայ, որը ձգվում է Ալէքսանդրիայից դէպի Պորտ-Սաիդ, բայց կասկածաւոր է, որ այս փոքրաթիւ մարդիկ կարողանան նպատակին հասնել. Բացի սրանից նշանակեցին դրամագումար նրանց համար, որոնք կը գտնեն մաքսանենգներին, բայց այս աւելի առիթ կը տայ սուտ մատնութիւններին, քան իսկական մաքսանենգների յայտնուելուն. Անգլիական ատենաւորները խորհուրդ տուեցին արագագնաց նաւախումբ հաստատել, որը երթեւեկէ ծովեզերքի բոլոր երկայնութեամբ մինչև Տրիպոլիս, բայց այս նախագիծը քիչ գործնական է երևում. Նախ և առաջ սահմանը Տրիպոլիսի և Եգիպտոսի մէջ այնպէս անորոշ է, որ մինչև այժմ չեն իմանում գտնվա՞ծ է թափառական բԱլուսսի կոչուած արաբական ցեղը թուրքական թէ եգիպտական հողի վերայ. Նմանապէս Ուլադ-Արօբի արաբական ցեղը, որ թափառում է ծովից ոչ հեռու, կարող է սահմանների անորոշութեան պատճառով ծածկուել թէ տաճկական և թէ եգիպտական վարչութիւնների վերայ. Թիւրքերը, ասում է «Politische Correspondenz» լրագիրը, վաղուց կարող էին, եթէ ցանկային օգնել իրերի այս վիճակին, բայց նրանց վերայ յոյս դնել դժուարէ. Դեօրնէ տաճկական վարչութիւնները, ընդհանրապէս, Արաբի-փաչայի ապստամբութեան ճնչելուց յետոյ, նպաստեցին փախչել ապստամբութեան երկու գլխաւոր դեկավարներին՝ Սուլէյման Դօղէյին և Մոստաֆէլ-Ալիադինին. Կ-Պոլսի չափազանց հեւաւորութեան պատճառով, խիստ վերահսկողութիւնը թրքական պաշտօնեաների վերայ անհնարին է. Վտանգից կարելի է ազատուել միայն այն ժամանակ, երբ Դուռը Տրիպոլիս կուղարկէ մի եռանդոտ նահանգապետ և սրա գործունէութիւնը կ՚ենթարկէ եւրոպական կոմիսարների վերահսկողութեանը.

Այն փաստը, որ ներկայումս հնարաւոր է լինում ննդութեամբ պէնքեր ու պաշարեղէն հայթայթել Սուդանի ապստամբներին, չատ անհանգստութիւն է պատճառում Եգիպտոսում և եգիպտական վարչութիւններ, «Politische Correspondenz» լրագրի կարծիքով, չատ լաւ կանեն, եթէ իսկոյն ձեռնամուխ կը լինեն այն միջոցներին, որոնց պահանջում է երկրի ներկայ ծանր վիճակը. Իբրև հաստատութիւն այս տեղեկութիւնների, Հռովմից մայիսի 18-ից ստացած հեռագիրը, որ տպուած է, «Neue Freie Presse» լրագրում, ասում է, որ յայտնի ճանապարհորդ Շվէյնֆուրտ գրել է Նաւապետ Կամպերիօյին, որ անհրաժեշտ է հսկել ոչ միայն Կարմիր ծովի ափի վերայ, այլև Տրիպոլիսի ափերի վերայ, որպէս զի կարելի լինի արգելք դնել Մահդիին ռազմամթերքներով մատակարարելուն. Շվէյնֆուրտի այս նամակի հիման վերայ, Նաւապետ Կամպերիօ „Rassegna“ լրագրի յօդուածներից մէկում յայտնում է այն միտքը որ անհրաժեշտ է Իտալիայի համար գրաւել Տրիպոլիսը, Բենգազի, Դեօրն և Միրզա-Տօբրուկ.

Եգիպտական խնդիր, Տեվֆիկ փաշայի վերայ ինչպէս հաղորդում է „Indépendance Belge“ լրագիրը խիստ վատ տպաւորութիւն է գործել այն լուրը որպէս թէ Անգլեան ցանկանում է նորից նստեցնել եգիպտական գահի վերայ Իսմայիլ փաշային. Անգլիայի Կաչիրում նստող ներկայացուցիչը, յայտնեց նրան, որ այս լուրը անհիմն է.

—

ԳԵՐՄԱՆԻԱ. «Temps» լրագրի Փարիզի թղթակիցը հեռեւեալ տողեր է նուիրում լորդ Րօզբերիի Բեռլին երթալուն. Լորդ Րօզբերին առաջուց թղթակցելով մասնաւոր կերպով գրաֆ Հերբերտ Բիսմարկի հետ, յայտնեց լորդ Գրենվիլլին և Գլադստոնին, որ Անգլիայի չահը պահանջում է Բիսմարկի Բեռլին գնալու հրաւէրը ընդունել. Մինիստրների հետ խոսակցելուց յետոյ նա ստացաւ պաշտօնական կարգադրութիւն խնդրել գրաֆ Բիսմարկի միջոցով ներկայանալու թոյլտուութիւն կանցլերի մօտ խորհրդակցելու երկու կառավարութեան էլ համար ուշադրութեան արժանի գործերի մասին. Լորդ Րօզբերին կարգադրութիւն ստացաւ գործել բացարձակ այսինքն ասել կանցլերին, որ Անգլիան համոզուեցաւ, թէ ինչ ահագին դժուարութիւններ է պատճառում նրան Գերմանիայի թշնամական յարաբերութիւնը և ցանկանում է իմանալ, թէ այս թշնամութեան պատճառը արդեօք կանցլերի վատ տրամադրութիւնն է դէպի կանցլերը, կամ նրա ցանկութիւնն գերմանական վաճառականութիւնը զարգացնել ի վնաս անգլիական վաճառականութեան, Գերմանիայի բռնած դիրքը դէպի Ռուսիան, Գերմանիայի մտաւորութիւնը դէպի Ֆրանսիան, թէ առհասարակ Անգլիայի դէմ ուղղուած ընդհանուր քաղաքականութիւնը. Այցելութիւնը իչխան Բիսմարկի հետ կայացաւ և խօսակցութիւնը վերաբերվում էր երեք կէտին, ամենից առաջ խօսք եղաւ Եգիպտոսի վերայ. Կանցլերը ապացուցանում էր, որ անհնարին է Անգլիայի համար միայնակ մնալ այս երկրում և անօգուտ է չարունակել ներկայ քաղաքականութիւնը, որը ոչինչ օգուտ չի ունենայ. Նա ասաց, որ անգլիական կաբինետի քաղաքականութիւնը Եգիպտոսին վերաբերեալ անթիւ դժուարութիւններ ծընեցրեց. Նրա կարծիքով Սուդանը պէտք է յանձնուի Իտալիայի կամ Թիւրքիայի տնօրինութեանը և Եգիպտոսից պիտի բաժանուի. Եգիպտոսը պիտի չեզոքացնուի ժողովրդականութիւն ստացած խեդիվի իշխանութեան տակ և երկիրը այն աստիճան պիտի զօրեղ լինի, որ կարողանայ պաշտպանել իր չեզոքութիւնը. Սուէզեան ջրանցքի չեզոքութիւնը պէտք է պահպանէ խեդիվը մեծ պետութիւնների ներկայացուցիչների հետ միասին, որտեղ գերիշխանութիւնը պէտք է պատկանի Անգլիային. Այս նա խօսեց Կեդրոնական Ասիայի հարցի մասին և վերջոյ գերմանական վաճառականութեան մասին, որի ապագային կանցլերը խորին կերպով հաւատում է.

—

ՀԱԲԵՇՍՏԱՆ.—Ադուայից հաղորդում են „Աստրօս“ լրագրին.—Հաբեշստանի թագաւոր Յովհաննէսը նորերումս ստացաւ Ալէքսանդրիայի ղպտիկների պատրիարքից տեղեկութիւն որ պատրիարքին չնորհուած է ռուսական շքանշան և տուած է խոստումն, որ ուղղափառ եկեղեցին իր պարտք կը համարի բարոյական և նիւթական պաշտպանութիւն ցոյց տալ Աֆրիկայի ղպտիկ և հաբեշական եկեղեցիներին, նրանց զարգացնելու և ծաղկեցնելու նպատակներով. Թագաւորը կարգաց նամակ ի լուր իր մինիստրների և ուղարկեց նրա պատճէնը Գոնդրի արքեպիսկոպոսին, որ սա էլ իր կողմից հաղորդէ հոգևորականութեան. Թագաւորը վճռեց մօտիկ ապագայում մի պատգամաւորութիւն ուղարկել Աթէնք և Կ. Պոլիս և յետոյ Պետերբուրգ ողջունելու թագաւորին և սինօդին. լսվում է, որ չուտով Ադուա կը գայ ռուսական դեսպանութիւնը նամակներով և ընծաներով.

—

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիական հանրապետութեան նախագահը մի հրովարտակ հրատարակեց, որի զօրութեամբ Պանտէօնին յետ է դարձնվում իր նախկին նշանակութիւնը՝ Ֆրանսիացի երևելի քաղաքացիների թաղման տեղ լինելու, որի մասին վկայում է նոյն իսկ շինութեան ճակատի արձանագիրը. «Aux grands hommes, la patrie reconnaissante». Ազգային ժողովը 1791 թ. ապրիլի 10-ին կարգադրեց Ս. Ժէնևեվի եկեղեցին դարձնել Պանտէօն, վերջերում 1801, 1821, 1851 և 1862 թուերի դեկրետների համաձայն Պանտէօնը դարձաւ Ս. Ժէնևեվի եկեղեցու փոխուեց. Ներկայ ժամանակում այդ բոլոր դեկրետները իրենց ոյժը կորցնում են նախագահ Գրեվիի դեկրետով. Գրեվիի այդ դեկրետի չարքում հրատարակուած է մասնաւոր դեկրետ, որի հիման վերայ Վիկտոր-Հիւգոի մարմինը պիտի ամփոփուէր Պանտէօնում. Պէտք է յուսալ, որ Ս. Ժէնէևեվի եկեղեցին նորից Պանտէօն ձևափոխումն յարձակումներ առաջ կ՚բերի պահպանողականների կողմից և պատգամաւորների պալատում վէճի առարկայ կը դառնայ. Մէջոնն արդէն առաջարկութիւն արաւ այս դէպքից օգտուելու և մինիստրութիւնը յանդիմանութեան ենթարկելու, բայց այդ առաջարկութիւնը ձայների մեծամասնութեամբ մերժուեցաւ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բժշկականութիւնը երբէ այսքան արհեստ ընդունուած լինելով Գերմանիայում, ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր

մարդ ազատ է բժշկականութեամբ պարապելու, երբ կամենում է։ Այդ պատճառով զանազան շառլատաններր հարկադրուած չեն թագչելու։ Բժիշկ Մէյերը Բաւարիայում գործող շառլատանների վիճակագրութիւնն է հրատարակ հանում։ Բաւարիայում 1883-ին բժշկականութեամբ պարապում էին 1485 ոչ-բժիշկները, այնպէս որ իւրաքանչիւր 10,000 մարդու վերայ հաշուած էր 27, 4 շառլատան։ Դրանց թւում սափրիչները և ջատու պառաւները և զանազան դեղավաճառները 547 հոգի են. մնացեալ 63,2 էլ կազմում էին զանազան կոչման պատկանող անձինք։

* *

Վիկտոր Հիւգոյի սովորութիւնները և կենցաղավարութիւնը։—Երևելի բանաստեղծը շատ թոյլ ծնուեցաւ և երիտասարդական հասակում հիւանդոտ էր, իսկ յետոյ դարձաւ քաջառողջ տղամարդ. «Temps»-ի խօսքերին նայելով նա խըստաբար հետևում էր առողջապահական կանոններին։ Նրա առոյգ ծերութիւնը զարմացնում էր իւր մերձաւորներին։ Նա իւր կեանքը գեղեցիկ կերպով էր կարգադրել։ Հօրնզէյի կղզու Haute ville -House-ում մինչև օրս էլ կարգացվում են նրա՝ պատերի վերայ գրած հետևեալ տողերը. «վեր կենալ վեց ժամին, ճաշել տասին, ընթրել վեցին, քնել ժամի տասին. սա մարդու կ'ապրեցնի տասն տնգամ տասը տարիներ»։ Նա գործը կատարելու ժամանակ միշտ ոտի վերայ կանգնած էր լինում և, մեծաւ մասամբ պատուհանները բաց, որպէսի եղանակ էլ որ լինէր։ Այսպիսի պայմանների տակ է գրուած „Notre Dame de Paris» ձմեռ ժամանակ։

* *

Առանց կանանց քաղաք։—Կեախտայից դէպի հարաւ աւազային անապատի մէջ տեղում, Մոնղոլիայի սահմանի վերայ, ընկած է չինական Մայմաչին քաղաքը, որ չինարէն նշանակում է «գնել ու վաճառել», հետևաբար, նոյն իսկ տեղի կոչումը ցոյց է տալիս, որ դա վաճառականութեան կեդրոն է։ Նրա մէջ ապրում են 3000 միմիայն տղամարդիկ։ Այստեղ ոչ մի կին չ'կայ. քաղաքում երբէք չի լսվում մանկան թոթովումը, փողոցներում խաղացող երեխաները չեն երևում։ Այդ նրա համար չէ, որ բոլոր մարդիկը չեն ամուսնացած։ Նրանցից շատերը կին ու երեխաններ ունին, բայց նրանք առանձին են ապրում Չինաստանում։ Չինական կառավարութիւնը, որպէս զի իւր հպատակների մէջ հիմք չ'բռնէին ռուսական սահմանագլխին շատ մօտիկ գտնուելու համար «վարքերի փչանալը», արգելում է կանանց Մայմաչինում ապրելու։ Վասն որոյ քաղաքում ապրում են վաճառականները՝ իրենց համար վաճառականներ ունենալով, և միշտ իրենց հիւրերի տեղ են դնում, թէև այնտեղ մշտապէս ապրում են 20 և աւելի տարիներ և սեպհական տներ ունին։ Ընտանիքի հայրը Մայմաչինում պարտաւորուած է, եթէ ցանկանում է իւր կնօջը կամ որդւոցը տեսնել, անապատների միջով երկար ճանապարհորդութիւն յանձն առնել ուղտի վերայ մի ամբողջ ամսուայ ընթացքում, և նոյն ձևով էլ վերադառնալ։

* *

Սալտամօրտալէ (Համարձակ թռոյցք)։—Հենց այս բառի ամենալայն նշանակութեամբ պրօֆեսօր Րօբերտ Օդլում մի մահացուցիչ թռոյցք առաւ, Նիւ-Եօրքի կամուրջից ընկնելով գետը։ Կամուրջի մէջ տեղը 135 ոտնաչափով բարձր է ջրից։ Օդլումը, այս նշանաւոր լուղորդը կարողացաւ թռոյցքի ամբողջ ժամանակ բռնել իւր մէջքը ուղիղ։ Նատ ժամանակ չէ, որ նա խնդրել էր քաղաքի վարչութիւնից թոյլ տալ իրեն թռչել կամուրջից գետը. բայց այս նրան չէին թոյլ տալիս, և ոստիկանութեան յանձնուած էր աչալրջութեամբ հետևել նրան։ Երբ Օդլումը վճռեց թռչել կամուրջից, այն օրը նրա բարեկամները ոստիկանութեան ուշադրութիւնը դէպի ուրիշ կողմն էին կարողացել գրաւել։ Նրա միւս բարեկամները դիտմամբ լողում էին շոգենաւով գետի վերայ, որպէս զի կարողանան նրան իսկոյն ջրից հանել, հենց որ նա կը թռչի։ Այս սալտամօրտալէից յետոյ, որին նա ցանկանում էր այնպէս տաք, Օդլումը կարողացաւ ապրել միայն մի քանի րոպէ և վախճանուեցաւ, երբ շոգենաւը մօտեցաւ ափին։

* *

Նիւ-Եօրքեան բժշկական լրագիրը հաշվում է, որ մարդ իւր կեանքի յիսունամեայ հասակի ընթացքում քընում է 6000 օր, նոյն չափ օր էլ գործ է կատարում, 2000 օր ուտում, 800 օրը զբօսնում, 500 օր հիւանդանում է, իսկ մնացեալ ժամանակը այլ բանեւրով է զբաղվում։

* *

Վիկտոր Հիւգոյի մասին անեկդոտներ։—Վիկտոր Հիւգոյի սէրը դէպի մանուկները կինայ ինչպէս մի աւանդութիւն։ Այդ առթիւ պատմում են հետևեալ անեկդոտը. Իւր, ծերնգէյ կղզում աքսորման օրերում, Վիկտոր Հիւգոն իւր առանձնակի գրասենեակից մէկի ժամանակ ճանապարհին ծայրին մի հնգամեայ մանուկ տեսաւ, որը տրորում էր աչքերը, ինչպէս լռում էր, երկար նշելուց յետոյ։ Դա անգլիացի տ. X-ի որդին էր, այդ տեկնոջ հետ բանաստեղծը միմիայն «ողջոյն» տալով ծանօթ էր, անգլուհին ապրում էր կղզու միւս ծայրի վերայ։ Երեխան զբօսնելով աղախինի հետ, դադարեց և քուն մտաւ, Հիւգոն ժըպտաց. Նրան նստեցրեց իւր ուսերի վերայ և տուն տարաւ, որպէս զի այնտեղից իւր սպասաւորի ձեռքով ուղարկէ։ Ցանկարծ սաստիկ փոթորիկ վերկացաւ։ Անհնարին էր երեխային ուղարկել յորդառատ անձրևի ժամանակ։ Վիկտոր Հիւգոն ուղարկեց տ. X-ին ասելու, որ նրա որդին իւր մօտ հիւր կը մնայ մինչև հետևեալ առաւօտ։ Միւս օր մանուկը տուն դարձաւ իւր հետ ունենալով մեծ քանակութեամբ ծաղիկներ և մրգեղէն։ Երբ որ երեխային իրենց տանը հարցրին, թէ ուրախ և գո՞հ էր երևելի բանաստեղծից. նա ասաց. „Էլ ինչ ասել կուզէ։ Մենք առիւծ և որսորդ էինք խաղում։ Պ. Հիւգոն առիւծ էր և նստել էր սեղանի տակ, որին որջ էր անուանում։“

—Մի՞թէ, ծիծաղելով հարցրեց տիկին X-ը։—„Եւ երևակայիր, մայրիկ. յանկարծ առիւծն սկսեց ծանչալ. ուզում էր որջից դուրս ցատկել, ուստի սփռոցից սկսեց քաշեց այնպէս, որ սեղանի վերայի բոլոր բաժակները ջարդ ու փշուր արեց և մենք ծիծաղից թուլանում էինք։“

* *

Պրօֆեսօր Մոմզէնի բնաւորութեան մի յատկանիշը։—Ասում են, որ եթէ պրօֆէսօր Մոմզէնի ուշադրութիւնը զբաղուած է մի որևիցէ առարկայով, նա այլ ևս ոչինչ չի տեսնում իւր չորս կողմը և ոչինչ չէ լսում։ Այս հաստատուեցաւ նրա Վիեննայում գտնուելու ժամանակ։ Երբ երևելի ուսումնականը բնակուեցաւ քաղաքից դուրս մի տան մէջ, Վիեննայի բաղաքթիւ գիտնականները գալիս էին ծանօթանալու հռչակաւոր հիւրի հետ։ Այսպէս մի անգամ եկաւ նրա մօտ Վիեննայի համալսարանի մի դոցենտ, որը մի երկար ճառով յայտնում էր իւր յարգանքը դէպի գերմանացի ուսումնականը։ Այս ոգևորուած ճառի ժամանակ Մոմզէնի դէմքը ստացել էր մի տեսակ անորոշ արտասանութիւն. չէր կարելի իմանալ, բաւական է թէ անբաւական նրա ճառից։ «Ներեցէք, խնդրեմ, ասաց վերջապէս պրօֆէսորը, ձեր օձիքը վեր է բարձրացել»։ Դոցենտի սարք ու հարթի այս փոքրիկ անկարգութիւնը այնպէս գրաւել էր Մոմզէնի ուշադրութիւնը, որ նա ամենևին չէր լսել այցելողի խօսքերը։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

28 Մայիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Դրամագլամարնեւրից հաւաքելիք հարկերի մասին կանոնադրութիւնը Բարձրագոյն հաստատուած է և վաղը կը հրատարակուի, իսկ այսօր հրատարակուած է, որ կանոնադրութիւնը կը սկսուի գործ դրուել յուլիսի 1-ից այն պայմանով, որ հարկը չը վերաբերուի այն տոկոսաբեր թղթերի կտրոններին, որոնց հատուցման ժամանակը կընկնի վերոյիշեալ ամսաթուից առաջ, այլ և չը վերաբերուի նաև ընթացիկ կամ ուրիշ հաշւով կատարուելիք տոկոսներին և ուրիշ վարկային հիմնարկութիւններում դրուած գումարներին, որոնք մինչև այս տարուայ յունվարի 1-ը իրենց դրամատէրերի վերայ կը հաշուէին։

ՓԱՐԻԶ. Պատգամաւորների ժողովը հաւանեց նահանգների ցուցակին համաձայն ընտրութիւններին վերաբերեալ օրինագիծը սենատից փոփոխուած ձևով, ուրեմն օրինագիծը վերջնականապէս ընդունուած է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Երէկ՝ ամառկաւ դրամարժէքը։

Լոնդոն $24^{5}/_{16}$, և $24^{1}/_{2}$
Համբուրգ $207^{7}/_{8}$, և $208^{3}/_{4}$
Փարիզ $256^{3}/_{8}$ և $257^{1}/_{2}$ „ —
Պօլուիմպերիալ 8 ր. 7 կ. սակ.
Մաքս. կտրոններ (կուպոն) . 8 » 6 » սակ.
Արծաթ . . . 1 » 28 » »
Բօրսային դիս. 6 և $6^{3}/_{4}$ %
Պետակ. բանկի 5 տոմսեր.
1-ին շրջանի $99^{1}/_{2}$ ր. սակ.
2-րդ » . 97 ր. 87 կ. սակ.
3-րդ » . . $97^{1}/_{2}$ » »
4-րդ » . $97^{3}/_{4}$ ր. » ,,
5-րդ » . . $97^{1}/_{2}$ ր. „ գն.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի. 95 ր. 12 կ. սակ.
2-րդ » . $94^{3}/_{4}$ ր. — „ գն.
3-րդ » . . $94^{3}/_{4}$ ր. » սակ.
Տար. գում. 1-ին փոխ. 5% տոմսեր . . $224^{1}/_{2}$ ր. » »
» » 2-րդ $201^{1}/_{4}$ ր. » »
$5^{1}/_{2}$ % ռենտեր . $102^{1}/_{2}$ » ,,
Ոսկէ ռենտը . $169^{3}/_{4}$ ր. սակ.
Նոր կոնսոլ փոխ. $143^{1}/_{4}$ ր. »

29 Մայիսի.

ԼՈՆԴՈՆ. Գլադստոնը պատգամաւորների ժողովում յայտնեց որ երեկուայ քուէարկութեան պատճառով, կաբինէտը թագուհուն մի զեկուցում ներկայացրեց, որի բըվանդակութիւնը անյայտնի է, թէև նա հնարաւոր չէ գտնում աւելի ճիշտ որոշել նրան։ Մինիստրի առաջարկութեան համաձայն պատգամաւորների ժողովի նիստը յետաձգուած է մինչև ուրբաթ։

ԼՈՆԴՈՆ. Գլադստոնը երեկուայ նիստում, որը վերջացաւ եկամուտների նախահաշուի նախագծի մերժումով, ասաց, որ պատերազմական պատրաստութիւնների պատճառով նոր ծախսեր անելու համար անհրաժեշտ է աւելացնել հարկերը, և երբ որ պատգամաւորների ժողովը ընդունեց պատերազմական ծախսերի համար հարկաւոր եղած գումարը, նա պարտաւոր է նմանապէս միջոց տալ այդ ծախսերը ծածկելու. իսկ եթէ ժողովը կը մերժի այդ առաջարկութիւնը, կաբինետը կը տայ իւր հրաժարականը։

ԼՈՆԴՈՆ. Այսօր Ֆրանս-չինական դաշնագրութիւնը ստորագրուեցաւ։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԴ

Հարկաւոր են առողջակազմ և հաւատարիմ ԾԱՌԱՆԵՐ, որոնք մի փոքր ալբուբենից տեղեակ են և կարդալ գիտեն ինչ լեզուով կուզէ լինի։

Հարցնել ,,Նոր-Դար''-ի խմբագրատանը։

ՇՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 2342.) 48—15

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է Կենդրօնական, Կովկասեան գրավաճառանոցներում և պ. Համազասպ Աբովեանցի խանութում։

«ՆԺԴԻՀԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ»։

Գէորգայ Խարազեանց.

Գինն է 30 կոպ.

3—1

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ։

Նոյեմբերի 1-ից կազմուածցուցակը շոգենաւերի երթևեկութեան համար մի շաբաթուայ ընթացքում Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի մէջ։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, ժամի 4-ին երեկոյեան, ուղիղ գծով Նովօրօսիսկ և Կերչ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան շրջանական գծով ամէն նաւահանգիստների վերայ։

8 ԿԻՐԱԿԷ օրերը, արտասահմանեան գծով դէպի Կ. Պօլիս։

ԳԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, կէս գիշերին մօտ, Օդեսայից շրջանական գծով։

ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովօրօսիսկ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Կ. Պօլսից։

Քաղաքի կամուրջներից անցնելու համար վերցնելիք հարկի մասին եղած կանոնների իբրև բացատրութիւն, ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է սրանով հասարակութեան, որ կամուրջներից անցնելու համար փայէտոնների և դրօժկաների վերայ նշանակուած հարկը վճարում են սրանց մէջ նստողները, իսկ երբ ոչ ոք չկայ նստած փայէտոններում կամ դրօժկաներում հարկը վճարում են կառապանները։ 3—1

Անդրկովկասեան երկաթուղին։

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍԻ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաթում՝ պատ. գնում է ժ. 8—35 րոպ. առ.
Բաթումից „ գալիս է „ 10—25 „ գեշ.
Բագու . . . գնում է „ 10—55 „ գեշ.
Բագուից „ „ գալիս է „ 8 —„ „ ցեր.

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ.

Թիֆլիսից պաս.—Ճանապ. գնաց. գընում է . . . . . . ժ. 3—15 „ առ.
Սուրամից . . գալիս է „ 8—24 „ առ.

Վլադիկավկազեան պօստային

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԻՒԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքերը, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկավկազ գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջ.

Վլադիկավկազից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ.

Մէկ հայ ուսուցիչ համաձայն է գնալ ամառանոց և պատրաստել երեխայոց գիմնազիոնի ա. բ. և գ. դասատանց համար։ Պայմանները կարող են իմանալ ցանկացողները Քիշմիշեանի խանութում, Բարանասովի տանը, Թամամշովի քարվանսարայի դէմ, առաւօտեան 11 ժամից ց12 ժամն ամեն օր։ 5—4

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Երեքշաբթի օրը, յունիսի 4-ին «Անատոլիա» շոգենաւը (Anatolie), որի նաւապետն է Բօշէլ (Boschel) կը մեկնի Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսուն, Կ. Պօլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին։ Բաթումում պ. ԳԱՐՍՆԵՕՆԻՆ և Թիֆլիսում պ. ՌԻՆՕՒԻՆ, գալէրէյ նախկին Արծրունու, № 103։

3—1

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го Мая 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., №